ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2025 թվականի N 1709 - Ն

ՊԱՐՏԱՊԱՆԻ ՄԻԱԿ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՄԻԱԿ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՈՒՄԱՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կատարողական վարույթի մասին» օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և 4-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ պարտապան ֆիզիկական անձին (ներառյալ անհատ ձեռնարկատիրոջը) պատկանող միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումարը կազմում է 7 800 000 դրամ:

2. Պարտապան ֆիզիկական անձին (ներառյալ անհատ ձեռնարկատիրոջը) պատկանող բռնագանձման ոչ ենթակա միակ բնակարանի բաժնեմասի նվազագույն գումարը որոշվում է սույն որոշման 1-ին կետով նախատեսված գումարի և քաղաքացի-պարտապանի միակ բնակարանի բաժնեմասի արտադրյալով:

3. Պարտապանին 1-ին և 2-րդ կետերին համապատասխան որոշված վերադարձման ենթակա գումարը պարտապանի ընտրությամբ փոխանցվում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ ծառայություն) (համապատասխան ստորաբաժանման) դեպոզիտ հաշվին կամ Հայաստանի

Հանրապետությունում գործող բանկում պարտապանի անունով բացված հատուկ բանկային հաշվին:

4. Պարտապանին 1-ին և 2-րդ կետերին համապատասխան որոշված վերադարձման ենթակա գումարը կարող է տնօրինվել միայն բնակարան ձեռք բերելու կամ վարձակալելու, պարտապանի կամ իր մերձավոր ազգականի (ամուսին, զավակ, ծնող, տատ, պապ, թոռ, քույր, եղբայր) բուժման կամ կրթության, ինչպես նաև կատարման ենթակա ակտը կատարելու նպատակներով:

5. Ծառայության (համապատասխան ստորաբաժանման) դեպոզիտ հաշվին կամ Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում պարտապանի անունով բացված հատուկ բանկային հաշվին առկա պարտապանին 1-ին և 2-րդ կետերին համապատասխան որոշված վերադարձման ենթակա գումարը ծառայությունը կամ հատուկ հաշիվը տնօրինող առևտրային բանկը փոխանցում է՝

1) բնակարան ձեռք բերելու կամ վարձակալելու նպատակով՝ համապատասխան առուվաճառքի կամ վարձակալության պայմանագրի հիման վրա՝ դրանում նշված հաշվեհամարին: Վարձակալության պայմանագրի դեպքում ծառայությունը կամ հատուկ հաշիվը տնօրինող առևտրային բանկը գումարի փոխանցումը կատարում է ըստ պայմանագրում նշված վարձավճարի վճարման ժամանակացույցի.

2) բուժման կամ կրթության նպատակով՝ համապատասխան հաստատության կողմից տրված տեղեկանքում նշված հաշվեհամարին.

3) կատարման ենթակա ակտը կատարելու նպատակներով՝ հարկադիր կատարողի կողմից կայացված որոշման մեջ նշված հաշվեհամարին:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի «Պարտապանի միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումար սահմանելու մասին» N 808-Ն որոշումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Կատարողական վարույթի մասին» օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ